Նաիրա Աբրահամյան

Շունը

Շունը չորս ձագ էր ունեցել: Չորսն էլ կախվել էին մոր պտուկներից ու անդադար ծծում էին: Ոչի՛նչ, երկաթից ամուր մի քանի ոսկոր կգցեն դեմը, հինումին ապուրի մնացորդ կտան, կաթի պակաս չի ունենա:

Տանտիրուհին ներս մտավ: Մի անծանոթ կնոջ հետ էր: Ա՜յ քեզ բան. շունը երբեք սեխի գլխով այդ երկարավզին չէր տեսել:

Վեր թռավ մայր շունը, ձագերին շպրտեց այս ու այն կողմ: Ոչի՛նչ, քաղցից չեն մեռնի, թող սպասեն, չէ՞ որ տերն էր ներս մտել: Մեծահոգի էր շունը: Անդադար լիզում էր տիրուհու ոտքերը, ուզում էր ասել, հասկացնել, գոռալ, որ ինքն էլ է մայր դարձել, որ չորս երեխաներ ունեցող տիրոջն այսուհետ ավելի լավ կհասկանա:

Կողպեքը ժանգոտ էր, բայց մի կերպ փակեցին:

Շունը պառկեց: Երանի ինքն էլ հաչելու նման հմուտ լացել կարողանար:

Ձագերից երկուսը սեխի գլխով երկարավզի գրպանից մոր կողմն էին նայում: Երանի մայրն իրենց էլ լացել սովորեցներ:

Լույսը կրկին բացվեց: Թթված կաթի հոտը շուրջբոլորն էր տարածվել: